



Հասցե. ՀՀ, 3103, ք.Ապարան, Բաղրամյան 26  
Հեռ./ֆաքս +/ 0252/ 6 53 62  
Էլ.փոստ  [aarhuscenter@aparan.am](mailto:aarhuscenter@aparan.am),  
[info\\_aparan@aarhus.am](mailto:info_aparan@aarhus.am)

Address Bagramian 26 , Aparan, 3103, RA  
Tel./Fax +/ 252/ 6 53 62  
E-mail  [aarhuscenter@aparan.am](mailto:aarhuscenter@aparan.am),  
[info\\_aparan@aarhus.am](mailto:info_aparan@aarhus.am)

ԱՊԱՐԱՆԻ ՕՐՀՈՒՍ ԲՏՀԿ ԵՌԱՄՍՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
2009 թ , ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՀՈԿՏԵՄԲԵՐ , ՆՈՅԵՄԲԵՐ

Հաշվոտու ժամանակահատվածում Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող Արկադի Կարապետյանի կողմից կազմակերպվել և իրականացվել են հետևյալ միջոցառումները:

ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կենտրոնը նոր աշխատակազմով գործում է սեպտեմբեր ամսից: Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնի նախաձեռնությամբ և աջակցությամբ անցկացվել են 24 միջոցառում՝ սեմինարներ, դասախոսություններ, դասընթացներ, հանդիպումներ, ցուցահանդես, էքսկուրսիա և այլն: Աշխատանքային գործունեության երեք ամիսների ընթացքում կենտրոնում անցկացված միջոցառումները հիմնականում ուղղված են եղել Օրհուսի կոնվենցիայի առաջին դրույթի՝ տեղեկատվության մատչելիության իրավունքի իրագործմանը: Համայնքի բնակիչները տեղեկացված են կենտրոնի գործունեության մասին, Օրհուս կոնվենցիայի գաղափարներին և հիմնադրույթներին: Ապարանի քաղաքապետ Գ. Աբրահամյանի նախաձեռնությամբ յուրաքանչյուր ամսվա վերջում կենտրոնի աշխատանքները լուսաբանելու նպատակով կենտրոնին տրամադրվում է հեռուստաթեր տեղական << ՆԻԳ >> հեռուստաալիքով, որը հեռարձակվում է նաև շրջակա գյուղերում: Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնը համագործակցել է տեղական իշխանությունների, հասարակական կազմակերպությունների, հասարակայնության ներկայացուցիչների հետ, տրամադրել է տեղեկատվություն, տեսաֆիլմեր, տվել է հայտարարություններ: Ձևավորվել է փորձագետների խորհուրդ, իրականացվել են համայնքի բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրություններ և նկարահանումներ: Կենտրոնում կազմակերպվել են հանդիպումներ

հիմնարկությունների, ուսումնական հաստատությունների, սանէպիդ ծառայության, առողջապահության, ՏԻՄ-երի և երիտասարդների հետ: Հանդիպումների ընթացքում ձեռք է բերվել բնապահպանական միջոցառումների համատեղ անցկացման պայմանավորվածություն: Կենտրոնի նախաձեռնությամբ նկարահանվել է քաղաքի սանիտարական վիճակի մասին տեսանյութ, կենտրոնն աջակցում է քաղաքի 22 շենքերի բնակիչներին՝ շենքերի բակի ճահճացման խնդրին լուծում տալու հարցում: Կենտրոնի գործունեության մասին տպվել է մեկ հոդված մարզային մամուլում: Երեք ամիսների ընթացքում կենտրոն են այցելել 266 մարդ, ինչը կազմում է Ապարանի բնակչության 4%-ը:

## ԱՊԱՐԱՆԻ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

10.09.09թ. Ապարանի Օրհուս ԲՏՀ կենտրոնում տեղի ունեցավ փորձագետների խորհրդի առաջին նիստը:  
Խորհուրդը հաստատվեց 9-ը անդամներից:  
Ընտրվեց փորցագետների խորհրդի նախագահ:  
Հաստատվեց սեպտեմբեր ամսվա աշխատանքային պլանի գրաֆիկը:  
Ռեզոլյուցիաներ կոնվենցիաին, և հաստատվեց Ապարանի տարածաշրջանի հիմնախնդիրների ցանկը:

Ապահովել եմ խորհրդի անդամների մասնակցությունը նիստին:  
Ողջունել եմ ներկաներին, նրանց ներկայացրել կառույցի հիմնախնդիրները, գրասենյակի կողմից կազմված Ապարանի հիմնախնդիրների մասին և կոչ արել ցուցաբերել ակտիվ մասնակցություն մեր տարածաշրջանում գտնվող բնապահպանական հիմնախնդիրների լուծման հարցում:

11.09.09թ. Կազմակերպվել է կլոր սեղան, Ապարանի ՏԻՄ - երի, ՀԶ - երի և կրթօջախների ներկայացուցիչների հետ:

Նպատակը՝ Մասնակիցներին ներկայացվեցին Օրհուսի կոնվենցիայի հիմնադրույթները, կենտրոնի նպատակները և խնդիրները:

Ներկաներին ներկայացվել է կենտրոնի գործունեությունը, բնապահպանական խնդիրների, լսել յուրաքանչյուրի կարծիքն այդ խնդիրների լուծման հարցում:

12.09.09թ. Ապարանի Օրհուս ԲՏՀ կենտրոնում տեղի ունեցավ դասախոսություն Ապարանի N 2 միջն դպրոցի միջին դասարանների աշակերտների համար:  
Ապահովել եմ դասախոսների մասնակցությունը:

Նպատակը՝ Պարզաբանել օգոնայի շերտի նշանակությունը, քայքայման

պատճառները և պահպանության ուղիներն ու միջոցները:  
Աշակերտները դիտեցին «օզի օզոն» մուլտֆիլմ :

15.09.09թ. Ապարանի թվով 4 կրթօջախներում տեղի ունեցավ միջոցառում  
16.09.09թ. նվիրված օզոնային շերտի պահպանության միջազգային օրվան:  
17.09.09թ. Աշակերտները բարձր մակարդակով ներկայացրեցին օզոնի  
կարևորությունը մեր կյանքում և ներկաներին կոչ արեցին միանալ  
իրենց և հրաժարվել մեկ ամիս բոլոր տեսակի դեղորայքատներից,  
որոնք իրենց մեջ կրում են ֆրիոն գազ:

Ռոջունել եմ աշակերտներին, ներկայացրել կենտրոնի գործունեության  
մասին և խոսել դպրոցի ու կենտրոնի միջև կապի ամրապնդման մասին

16.09.09թ. Աանցկացվել է սեմինար «ԵԱՀԿ առաքելությունը» և օզոնային շերտի  
«Դարի էկոլոգիական հիմնախնդիրներից է պահպանությունը»  
թեմաներով:  
Սեմինարին մասնակցում էին Ապարան քաղաքի մանկավարժները,  
բժիշկները, ավագանու ներկայացուցիչները:

Նպատակը՝ Ներկաներին ծանոթացնել ԵԱՀԿ-ի գործունեությանը, Օրհուսի  
կոնվեցիայի հիմնադրույթներին, օզոնային շերտի նշանակությունը  
և պահպանման ուղիներն:

Սեմինարը անցկացրեցին՝

Ամալյա Համբարձումյանը (Երևանի պետ. կառավարման  
ակադեմիայի դասախոս)

Ռազմիկ Խումարյան «ԵԱՀԿ»:

18.09.09թ. Ապարանի Օրհուս կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում  
Ապարան քաղաքի մի խումբ երիտասարդների հետ:

Նպատակը՝ Ներկաներին ներկայացնել Երկիր մոլորակի ջրային պաշարները,  
դրանց սպառման տեսակները, ջրային ավազանները աղտոտող  
հիմնական նյութերը:  
Ներկաներին ներկայացվեց Ապարանի ջրային ռեսուրսները և  
դրանց աղտոտվածությունը:

22.09.09թ. Ապարանի Օրհուս կենտրոնի կողմից շնորհակալագրեր հանձնվեցին,  
Ապարանի կրթօջախներին՝ օզոնային շերտի կապակցությամբ  
կազմակերպած միջոցառումների համար:

Հանձնել եմ շնորհակալագրերը, շնորհակալություն

հայտնել կրթօջախների տնօրեններին, կազմակերպիչներին և աշակերտներին:

26.09.09թ. Ապարանի Օրհուս կենտրոնում կատարվեց նկարահանում տեղական հեռուստատալիքով հեռաձայնելու համար:

Նպատակը՝ Քաղաքացիների իրազեկումը:

Թեման՝ Ներկայացնելիք կենտրոնի գործունեության ուղղությունները, Օրհուսի կոնվենցիայի հիմնադրությունը և մեր տարածաշրջանում գտնվող հիմնախնդիրները:

Ներկայացրել եմ մեր տարածաշրջանում գտնվող բնապահպանական հիմնախնդիրների մասին:

Կոչ արել համաքաղաքացիներին մաքուր պահելու քաղաքը, չաղտոտելու մեր շրջակա միջավայրը:

Ամսվա ընթացքում

հանդիպում՝ Հանդիպել եմ պաշտոնյաների հետ՝

Ապարանի քաղաքապետի

Ապարանի փոխքաղաքապետի

Ապարանի գլխավոր ճարտարապետի

Ապարանի քաղաքապերարանի գյուղ բաժնի վարիչի

Ապարանի հողաշինարարի

Ապարանի »ՆԻԳ« ԲԲԸ տնօրենի:

Նպատակը՝ Լավագույնս տեղյակ լինել տարածաշրջանում գտնվող բնապահպանական հիմնախնդիրներին, դրանց լուծման լավագույն առաջարկությունները և տարբերակները:

Կենտրոնին նոր տեղեկություններ տալը և այլն:

Հոկտեմբերի 5 - ին կենդանիների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ, Ապարանի Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ Ապարանի թիվ 2-րդ դպրոցում կազմակերպվեց բնականացված միջոցառում: Երկրորդ դասարանի փոքրիկները ներկաներին բնականացման միջոցով ներկայացրեցին կենդանիների դերը և նրանց անխնա ոչնչացման պատճառները: Միջոցառմանը ներկա էին ուսուցիչներ, բարձր դասարանների աշակերտներ և ծնողներ, միջոցառման ավարտին Ա.Կարապետյանը խորին շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին և աշակերտներին:

Հոկտեմբերի 6-ին Ապարանի արվեստի դպրոցում տեղի ունեցավ ցուցահանդես նվիրված կենդանիների պաշտպանության միջազգային օրվան, որտեղ ներկայացված

էր Ապարանի Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի և արվեստի դպրոցի աշակերտների աշխատանքները:

Յուզահանդեսին մասնակցում էին Ապարանի տարբեր կրթօջախների ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ և երիտասարդներ:

Արվեստի դպրոցի ուսուցչուհի Անի Թորոսյանը ներկաներին մանրամասնեց աշխատանքների նպատակը:

Արկաղի Կարապետյանը ներկաներին ներկայացրեց Օրհուս կենտրոնի գործունեությունը և նպատակները մասին:

Հոկտեմբերի 7-ին Ապարանի Օրհուս կենտրոնում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում Ապարանի որսորդմիության անդամների հետ:

Հանդիպմանը ներկա էին որսորդմիության Արագածոտնի մարզային տեսուչը, Ապարանի որսորդմիության նախագահը և մի քանի անդամներ:

Հանդիպման ընթացքում քնարկվեց Ապարանի տարածքում բնակվող կենդանական աշխարհի, տեսակների և քանակի մասին, նշվեց, որ մեր տարածքում կան անհետացման եզրին գտնվող տեսակներ:

Կենդանական աշխարհի բավականին խոշոր նվազման պատճառ է հանդիսացել անտառների զանգվածային ծառահատումները և մարդկային գործոնը, որը օրենքից դուրս զբաղվում է որսագողությամբ:

Արկաղի Կարապետյանը ներկայացրեց կենտրոնը, նրա կատարած աշխատանքները, ձեռք բերվեց մշտական համագործակցության պայմանավորվածություն, խոստացա որ կենտրոնը բնակչության իրազեկման հարցերում կօգնի նրանց՝ մեր բնությունը և կենդանական աշխարհը անադարտ պահելու համար:

Հոկտեմբերի 21-ին Ապարանի Օրհուս կենտրոնի կողմից տեղական հեռուստաալիքով եթեր հեռարձակվեց չորացած տերևների այրման վտանգների մասին:

Ա.Կարապետյանը կազմակերպել է այդ հեռարձակման տեխնիկական մասը:

Հոկտեմբերի 23-ին կենտրոնում անցկացվեց դասախոսություն մի քանի հիմնարկ ձեռնարկությունների աշխատակիցների համար: Դասախոսությունը կարդաց Ապարանի N 2-րդ դպրոցի կենսաբանության ուսուցչուհի Նարինե Մայիլյանը:

Դասախոսության թեման էր գենետիկորեն ձևափոխված օրգանիզմները:

Դասախոսության նպատակն էր որոշ չափով տեղյակ լինել և գերծ մնալ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներից, իրազեկել բնակչությանը:

Հոկտեմբերի 26-ին Ապարանի Օրհուս կենտրոն էին այցելել «Հայ Ասպետ» հեռուստաալիքի երկրորդ տեղ գրաված Ապարանի N 3-րդ դպրոցի աշակերտները: Աշակերտներին ներկայացվեցին Օրհուս կենտրոնի նպատակները, խնդիրները և գործունեության ուղիները:

Աշակերտները խոստացան համագործակցել կենտրոնի հետ:

- Ապարանի քաղաքապետ
- Ապարանի փոխքաղաքապետ
- Միջ համայնքային միավորման նախագահ

Գ.Աբրահամյան  
Գ.Երեմյան  
Ա.Ասլանյան

Նոյեմբերի 4- ին Ապարանի Օրհուս կենտրոնում տեղի ունեցավ դասընթաց նվիրված ՄԱԿ-ի ստեղծման պատմությանն ու գործունեությանը: Մասակիցները տեղեկացան, որ արդի ժամանակաշրջանում ոչ մի երկիր և ժողովուրդ չի կարող միայնակ ու մեկուսացած պահպանել իր գոյությունը, լուծել բազմազան ու բազմաբնույթ խնդիրներ: Համագործակցության միջոցով է, որ երկրներն ու ժողովուրդները միավորում են իրենց ուժերն ու հնարավորությունները և համատեղ դիմակայում ժամանակի մարտահրավերներին , որ համագործակցության բարձրագույն ձևը միջպետական այսինքն` կառավարական մակարդակով համագործակցությունն է, ինչի վառ օրինակը ՄԱԿ-ն է: Ներկաներին ներկայացվեց ՄԱԿ-ի համակարգը , կառուցվածքը, ֆունկցիաները, հատուկ մասնագիտացված բնապահպանական կազմակերպության` ՅՈՒՆԵՊ-ի , բնապահպանական կրթության և գիտելիքների տարածմամբ զբաղվող ՅՈՒՆԵՍԿՈ-ի և այլ գերատեսչությունների ու ծրագրերի գործունեությունը:

Նոյեմբերի 6- ին Ապարանի Օրհուս կենտրոնում համայնքի ուսուցիչների , բժիշկների և ՏԻՄ-ի ներկայացուցիչների համար անցկացվեց դասընթաց "Էկոլոգիական կրթություն և բնապահպանական խնդիրներ " թեմայով : Դասընթացն անցկացրեց ,,ԽԱԶԵՐ " Էկոլոգումշակության շՆ-ի նախագահը, որը խոսեց աշխարհի բնակչության և արդյունաբերության արագ աճի, արտադրական ծավալների մեծացման մասին, ինչի հետևանքով աղտոտվում, վատթարանում ու դեգրադացիայի է ենթարկվում շրջակա միջավայրը : Բնօգտագործման և բնական միջավայրի աղտոտման ներկա տեմպերի պահպանման դեպքում հարուրամյակներ, գուցե և տասնամյակներ հետո մեր մոլորակն այլևս պիտանի չի լինի բնակության համար: Ելքը բնապահպանության կտրուկ բարելավումն է ինչպես համաշխարհային, այնպես էլ առանձին պետությունների, ազգերի, համայնքների ու անհատների մակարդակով , որ բնության նկատմամբ մարդկանց վերաբերմունքի արմատական փոփոխությունը դառնում է ժամանակի հրամայականը: Ամեն մի անհատ, հասարակությունն ամբողջությամբ վերցրած, ոչ միայն պետք է գիտակցեն այդ վտանգը, այլև իմանա այն կանխելու միջոցները և սովորՇ բնության հետ ներդաշնակ ապրել, ինչն առանց Էկոլոգիական դաստիարակության և կրթության արդյունավետ համակարգի ուղղակի անհնար է:

Ելնելով Օրհուս կոնվենցիայի տեղեկատվության մատչելիության հիմնադրությից` կրթական մակարդակի բարձրացման նպատակով Ապարանի Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ նոյեմբերի 13-ին Ապարանի չորս դպրոցների բարձր դասարանների մի խումբ աշակերտների համար կազմակերպվեց էքսկուրսիա

Բյուրականի աստղադիտարան: Բյուրականի աստղադիտարանում դպրոցականները այցելեցին Վ. Համբարձումյանի տուն-թանգարան, իմացան, որ 1946թ-ին նա է հիմնադրել աստղադիտարանը, տեսան Շմիդտի՝ աշխարհի խոշորագույն ~ մեկ մետր տրամագծով աստղադիտակներից մեկը և մութն ընկելուն պես, աստղադիտարանի գիտաշխատողի օգնությամբ դիտեցին Քնարի համաստեղության ամենապայծառ աստղը՝ Վեգան, տեսան Արեգակնային համակարգության ամենամեծ մոլորակը՝ Յուպիտերը, աստղային կուտակումներ և այլն:

Նոյեմբերի 18-ին տեղի ունեցավ հանդիպում Ապարանի Օրհուս կենտրոնի և Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանի գյուղատնտեսության գծով տեղական խորհրդատուի հետ: Հանդիպման գլխավոր նպատակը մարզի հողային ռեսուրսների պահպանման և ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրն էր: Հողերի պահպանման գլխավոր ուղղությունը համայնքում էռոզիայի դեմ պայքարն է և այն դեգրադացիայից ու տեղատարումից պաշտպանելը: Նշվեց նաև վերակուլտիվացման խնդիրը և հողերի աղտոտման դեմ պայքարի ուղիները: Քննարկվեց գյուղատնտեսական հանդակների կառուցվածքը, որ 15 տարի առաջ մշակվող 750 հա վարելահողերից այսօր մշակվում են ընդամենը 45 հա-ը, որ կտրուկ ընկել է հողերի բերքատվությունը՝ նախկին 25-30 ցենտներից իջնելով 13ց-ի մեկ հեկտարից:

Վերը նշված խնդիրները լուսաբանվում են մարզային «Գյուղխորհրդատվություն» թերթում 1000 օրինակ ամսական տպաքանակով : Ձեռք բերվեց պայմանավորվածություն մարզային Գյուղխորհրդատվություն թերթում լուսաբանել Օրհուս կենտրոնի գործունեությունն և միջոցառումները: Արկադի կարապետյանը իր շնորհակալությունը հայտնեց Վահագն Խաչատրյանին համագործակցության համար:

Նոյեմբերի 22-ին Ապարանի Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիպում Ապարանի Ոստիկանության բաժնի և Զինկոմիսարիատի սպաների, Արագածոտնի մարզի որսորդմիության տեսչի, Ապարանի որսորդմիության նախագահի և " Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա " ՀԿ-ի Ապարանի մասնաճյուղի համակարգողի հետ: Հանդիպման ընթացքում խոսվեց բնապահպանական օրենսդրությանը սահմանված քաղաքացիների իրավունքների (Օրհուսի կոնվենցիայի հիմնադրույթներ ) ու պարտականությունների մասին, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է կատարել բնապահպանական օրենսդրության պահանջները՝ աջակցել բնության պահպանությանը, իսկ բնապահպանական օրենսդրությունը խախտող անձինք քաղաքացիական ու վարչական պատասխանատվությունից բացի կարող են ենթարկվել նաև քրեական պատասխանատվության և պարտադիր կարգով հատուցել բնական միջավայրին

հասցված վնասը: Մանրամասնորեն ներկայացվեցին բնապահպանական իրավախախտումների արդյունքում բուսական ու կենդանական աշխարհին պատճառած վնասի դիմաց գանձվող տուգանքների սակագները: Մասնակիցներին բաժանվեցին թեմային վերաբերվող տեղեկատվական թերթիկներ: Ա.Կարապետյանը կոչ արեց մասնակիցների, որ յուրաքանչյուրս մեր կարողության չափերով և ձևերով իրագրենք մեր բնակչությանը:

Նոյեմբերի 19-ին Ապարանի Օրհուս կենտրոնի և “ՏԱՊԱՆ” էկո-ակումբ ՀԿ-ի Ապարանի SPARE խմբակի - ԷՌՕԴԾ ( Էներգետիկ ռեսուրսների օգտագործման դպրոցական ծրագիր) հետ համատեղ թ. 2-րդ դպրոցում անցկացվեց “խնայենք էներգիան” թեմայով դասընթաց՝ նվիրված էներգոխնայողության միջազգային օրվան: Երեխաներին պարզաբանվեց, որ էներգախնայողությունը շատ կարևոր է շրջակա միջավայրի բարելավման համար, թե այն միջավայրի որում մենք անմիջականորեն ապրում ենք, և թե ամբողջ մոլորակի համար, և որ էներգախնայողությունը էներգետիկ ռեսուրսների խնայողությունն է, իսկ դրանց շահագործումն ու արդյունաբերական օգտագործումը՝ հանքավայրերը, ջեկերի, հանքային վառելիքով ու հումքով աշխատող բոլոր ձեռնարկությունները շրջակա միջավայրի աղտոտման վտանգավոր աղբյուր են: Երեխաները լրացրեցին էներգախնայողության անհրաժեշտության վերաբերյալ հատուկ փոստային բացիկներ քաղաքի դպրոցներ և հիմնարկ –ձեռնարկություններ ուղարկելու նպատակով:

Նոյեմբեր ամսվա ընթացքում բազմաթիվ անգամ Ապարանի Օրհուս կենտրոն են այցելել քաղաքի տարբեր դպրոցների երիտասարդներ: Նպատակը նախնական պայմանավորվածությամբ ՄԱԿ-ի և նրան առընթեր գործող, բնապահպանության հետ կապված կազմակերպությունների ու ծրագրերի վերաբերյալ ցուցաբացատրողների պատրաստումն էր: Թեմայի հետ կապված նյութեր հավաքելու համար դպրոցականներն օգտագործում են կենտրոնի ինտերնետ կայքից : Դրվել են կենտրոնի և երիտասարդության համագործակցության հիմքերը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ



- Ապարանի փոխքաղաքապետ
- Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանի գյուղատնտեսության գծով տեղական խորհրդատուի


Գ.Երեմյան


Վ.Խաչատրյան

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՏՐՈՒՆՅ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՂՅՈՒՍԱԿ I

ԱՄԻՍ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ	ԳՐԱԴԱՐԱՆ	ՖԻԼՄԱԴԱՐԱՆ	ԻՆՏԵՌՆԵՏ	ԺԱՏՃԵՆԱԴԱՆՈՒՄ
ՍԵՊՏԵՄԲԵՐ	87 մարդ	1 մարդ	5 մարդ	4 մարդ	6 մարդ
ՅՈՎՏԵՄԲԵՐ	102 մարդ	2 մարդ	4 մարդ	5 մարդ	5 մարդ
ՆՈՅԵՄԵՐ	77 մարդ	2 մարդ	5 մարդ	5 մարդ	6 մարդ
ԸՆԴԱՄԵՆԸ	266 մարդ	3 մարդ	14 մարդ	14 մարդ	17 մարդ





Ապարանի Օրիուս ԲՏՀ կենտրոն

Համակարգող՝

Ա.Կարապետյան

30.11.2009թ.